ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2024/113

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հուլիսի 2024 թ. N 113

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամ
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան փող.,1
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024 թվականի հուլիսի 4-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամի կրթական գործունեության (այսուհետ՝ Հիմնադրամ, հաստատություն, Հիմնարկ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

- դիմում-հայտի ներկայացում՝ 25 մարտի 2023 թ.
- վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 05 փետրվարի 2024 թ.
- փորձագիտական այցի իրականացում՝ 03-05 ապրիլի 2024 թ.
- փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 09 մայիսի 2024 թ.
- թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 12 հունիսի 2024 թ.

«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամի կրթական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով. **«Կառավարում և վարչարարություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Հիմնադրամի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների փորձագիտական գնահատման վերաբերյալ եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հիմնադրամը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամն իր կրթական գործունեությունն իրականացնում է «Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկի (Հիմնարկ) միջոցով: Իրականացվող մասնագիտության կրթական ծրագիրը առանձնահատուկ է իր բնույթով, ներառելով այնպիսի ուղղություններ, որոնք ՀՀ-ում դեռևս խորը հետազոտված չեն: Կրթական ծրագիրը մշակվել է ոլորտի առաջատար գիտակրթական կազմակերպությունների մասնագետների մասնակցությամբ՝ հաշվի առնելով ոլորտի զարգացման մարտահրավերները: ՄԿԾ-ի վերջնարդյունքները համապատասխանում են ՀՀ ՈԱԾ-ի 7-րդ մակարդակի բնութագրիչներին: Ծրագիրը ներառում է տեսական և կիրառական հատված, մեծ ուշադրություն է դարձված հետազոտական բաղադրիչին: Ծրագրի առանձնահատկություններից է ուսանողների ինտեգրումը միջազգային գիտական խմբերում՝ աշխարհի առաջատար գիտնականների հետ հաղորդակցման միջոցով, ինչը հնարավորություններ է ստեղծում ուսանողների շարժունության համար:

Դասախոսական կազմի ներգրավման մոտեցումների կիրառման արդյունքում հաջողվել է ներգրավել ոլորտի տեղացի և օտարազգի լավագույն մասնագետներին: Առկա են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, կարևորվում են ինչպես մասնագիտական կարողությունները, այնպես էլ դասավանդման փորձը, ինչը հնարավորություն է տալիս հասնելու ծրագրի հիմնական նպատակներին և սահմանված կրթական վերջնարդյունքներին:

Կրթությունն իրականացնում է երկրի առաջատար կազմակերպությունների տվյալ ոլորտի ժամանակակից սարքավորումներով հագեցած եզակի լաբորատորիաներում:

2. Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են

«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամի Գերազանցության համահայկական կենտրոն» միջազգային գիտակրթական հիմնարկն իր գործունեության երկու տարիների ընթացքում սահմանված հավակնություններին համապատասխան ապահովել է «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկա» մագիստրոսական կրթական ծրագրի հաջող իրականացումը՝ թողարկելով առաջին

շրջանավարտներին: Միևնույն ժամանակ, սահմանված հավակնությունների արդյունավետ և կայուն իրականացման համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հաստատության կառավարման համակարգի բարելավմանը:

Բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական ապահովումը պահանջում է անընդհատ տվյալների հավաքագրում և որոշումների կայացում: Զարգացման մարտահրավերներին դիմակայելու համար, անհրաժեշտ կլինի հզորացնել կառավարչական ռեսուրսները: Սա կնպաստի նոր դասախոսների ներգրավման և համապատասխան հետազոտություններ իրականացնելու համար անհրաժեշտ լաբորատոր ռեսուրսների ներդրման վերաբերյալ տվյալների հավաքագրմանը:

Այս խնդիրների լուծման հաջողությունը առաջին հերթին կախված է ֆինանսական կայունության և համապատասխան վարչական մշտական աշխատակազմ ներգրավման հետ:

Արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ներկայիս գործընթացները, որոնք այժմ իրականացվում են, դառնան ընթացակարգ և քաղաքականություն, որպեսզի հնարավոր լինի ապահովել դրանց շարունակական բարելավումը: Անհրաժեշտ է ունենալ որակի ապահովման համապատասխան ենթակառուցվածք, որը համագործակցելով կառավարման կառույցների հետ, և կապահովի գերազանցության նպատակների իրականացումը:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը

Հիմնարկում միջազգայնացման և հետազոտական/ստեղծագործական ոլորտներում դրված բարձր պահանջներն իրականացվում են: Այնուամենայնիվ, շահեկան կլիներ, որ ուսանողների կրթությանն աջակցող ծառայությունները համապատասխանեցվեն սահմանված հավակնություններին՝ ինտեգրելով ՀՀ-ում գործող հետազոտական միջավայրերի հետ՝ ընդհուպ մինչև ծառայությունների համատեղ իրականացումը կամ ռեսուրսների համատեղ օգտագործումը (ընդհանուր լաբորատորիաներ, գրադարան և այլն: Սա հնարավորություն կտա ուսանողների հավաքագրման արդյունավետության բարձրացմանը և ուսանողակենտրոն ուսուցման իրականացմանը և առավել գրավիչ կդարձնի իրականացվող կրթությունը՝ նոր ուսանողների ներգրավման տեսակետից:

Կարևոր է նաև, որ Հիմնարկը ուշադրություն դարձնի գիտական հոդվածների շարունակական հրապարակումներին, ապահովի ուսանողների մասնակցությունը փոխանակման ծրագրերին և միջազգային կոնֆերանսներին ՝ տրամադրելով համապատասխան միջոցներ:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Հիմնադրամի կողմից ներկայացված ծրագիրն հիմնականում իրատեսական է:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել հրատապ լուծում պահանջող խնդիրներին.**
   - իրականացվող կրթական ծրագիրը բուհական միջավայր ինտեգրմանը՝ պահպանելով Հիմնադրամի կողմից կատարվող ֆինանսավորումը և կրթական ծրագրին ներկայացվող պահանջները: Բուհական պահանջներին կառավարման համակարգի համապատասխանեցմանը,
   - մինչև կրթական ծրագրի՝ բուհական միջավայրում ինտեգրումը, հիմնարկի կազմակերպական կառուցվածքի վերանայմանը, վարչական անձնակազմի ավելացմանը և կարողությունների զարգացմանը,
   - ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը,
   - ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցմանը և ֆինանսական միջոցների կայունությանը,
   - տեղացի և միջազգային դասախոսների միջև հաղորդակցության ապահովմանը՝ ինչը կնպաստի մասնագիտական ոլորտում նորամուծությունների ներդրմանը և լավ փորձի տարածմանը,
   - որակի ապահովման համակարգի կայուն զարգացմանը՝ ներառյալ կրթական ծրագրի որակի ապահովման և մշտադիտարկման մեխանիզմների իրականացմանը:
4. Նշված գործողություններն իրականացնել երկու տարվա ընթացքում՝ ստեղծելով կառավարման թվային միջավայր, հիբրիդային ուսուցում կազմակերպելու շեշտադրումներով և դրան համապատասխան որակի ապահովման մեխանիզմներ ներդնելով:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Հիմնադրամի կրթական գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Հիմնադրամի կրթական գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2024 թ., հուլիսի 4